

Վ Ա Յ Ո Յ Ձ Ո Ր

Ե. ԼԱԼԱՅԵԱՆԻ

ԱԶԳԱՅՐ ՈՒԹԻԽՆ

ԶԳԵՍՏ ԵՒ ԶԱՐԴ

Դիւի յաղագրանք. Նախ սանրում են մազերը և 1—4 ֆամ հիւսում: Գունքերի մօտի մազերն էլ ուրում են և բկի տակ միմեանց հետ հանգուտում, եթէ, ի հարկէ, այդքան երկար են, իսկ եթէ ոչ՝ թելով կապում են: Ապա վերցնում են լաչակը, որ 3 արշին երկարութեան և 2 արշին լայնութեան եռանկիւնաձև սպիտակ, բարակ կտոր է, կամ գունաւոր չիթ, և կապում են գլխին այսպէս. մի ծայրը ձգում են գլխին, մի անգամ փաթաթում բկի վրայով և ծայրը բկի մօտ ճիւղում: յետոյ սրա վրայից դնում են պոլը գագաթին, լաչակի միւս ծայրը յետ են դարձնում, ձգում գլխին, այս միւս կողմից առաջին հասասար կախ ձգում և ծայրը տանում միւս ծայրի հետ հանգուտում, այնպէս որ երեսի երկու կողմից կրկնակի, իսկ յետևից՝ մի տակ (դաթ) եռանկիւնաձև կախ է ընկնում:

Պոլին մօտ 10 սանտիմետր տրամագծով, 3 սանտիմետր լայնութեան և մօտ մի սանտիմետր հաստութեան փայտէ շրջանակ է, վերան շոր փաթաթած և յետևի երկու կողմերից մի շորէ ժապաւէն՝ չքուղջ կապած, որը՝ գլխին դրած ժամանակ անց են կացնում բկի տակ:

Պոլին ոմանք շինում են և՛ կարդոնից, միայն այսպիսիների յետևի մասը փոքր ինչ թեքուած են անում:

Պուռ վրայից կապում են նակասանց—պուռ լայնութեան թաւեայ կամ շալի կտոր, վերան կլապիտոնով կամ գոյնզգոյն ուլունքներով, փիլաքներով (դեղին թիթեղի մանրիկ շրջանակներ) ասղնեգործած:

Պուռ վրայից ձգում են եռանկիւնաձև ծալուած բաղդադի (մետաքսից) կամ ւալ, որի աջ ծայրը բթի, իսկ ձախը՝ բկի տա-

կից անցկացնելով տանում, ծոծրակի մօտ իրար հետ հանգուտում են: Այսպիսով բերանը, հետևապէս և երեսի կէսը, ծածկւում է. իսկ նորահարսի երեսը ամբողջովին ծածկւում են, այն էլ առնուազը մի, իսկ առ առաւելը՝ չորս տարի, շալի կամ բաղդադի փոխարէն մեռակ ձգելով գլխին: Մէտակը եռանկիւնաձև, դեղնազոյն, կարմիր և կամ կանանչ գոյնի մետաքսեայ կամ հասարակ կտոր է, որ ճչմի դէպքում սև կամ սպիտակ չի կարող լինել: Մէտակը ձգում են գլխին ուղիղ մէջ տեղից, այնպէս որ եռանկիւնաձև կողմը կախւում է երեսի վրայ և ամբողջովին ծածկւում նրան, միւս երկու ծայրերը յետ են դարձնում և ծոծրակի մօտ միմեանց հետ հանգուտում:

Աղջիկները, նոյն իսկ նշանուած ժամանակ էլ, գլխներին միայն մի ետլուղ կամ շալ են ձգում և բկի մօտ հանգուտում:

Խալ.—Հնումը գեղեցկանալու տենչով երեք ասեղ միասին կապած խրում էին ճակատին, այտերին, քթի կողքերին, բազուկներին և ծծերին. և երբ արիւն էր դուրս գալիս՝ սուրմա էին ցանում վերան և մատով հուփ տալիս: Սուրման մտնում էր ծակերի մէջ և սև բծեր յառաջացնում, որ մի առ ժամանակ մնում էր և իբր գեղեցկութիւն նկատւում: Այժմ այլևս չեն անում:

Սուրմա.—Սևիկ և մեծ աչքերն աւելի գեղեցիկ համարուելով, Թէ հնումը և Թէ այժմ, կանայք արուեստօրէն սեպնում են շուրմա քաշելով: «Սուրմա» պատրաստելու համար կովի իւղ են ածում ձիթեհրապի մէջ, պատրոյգ դնում, վառում և մի որևէ բան բռնելով պատրոյգի վրայ՝ մուրը հաւաքում: Ահա այդ սև մուրը, որ կոչւում է սուրմա, միւլով (երկու վերջոկաշափ սրածայր փայտ), վերցնում են և քսում կոպերի եզրին, որպէս զի սեանան և մեծ ցոյց տան:

Սուրման ընդհանրապէս քաշում են գեղեցկանալու նպատակով, սակայն կայ երկու բան ևս, որոնք քաշում են՝ աչքերից հոսող ջուրը և քորը կտրելու նպատակով: Սրանք կամփի եւ սպիտակ բւթիան են: Կարմիր Թութիան պատրաստում են ռասուղ և շափարդար հաւասարաշափ ածելով մի կաւէ ամանի մէջ, մի երեսայի միգել են տալիս վերան և յետոյ դնում կրակին եփ տալիս, մինչև որ մէզը բոլորովին գոլորշիանում է, ապա վերցնում են մանրում, մաղում են բարակ շորով ու ածում հաւի ոտից հանած կաւէ քսակի մէջ պահում: Առաւելապէս հաց Թխելիս, կամ շաբաթը երկու կամ երեք անգամ, երբ յաճախ Թոնրի մէջ կուսալուց, սաստիկ ծխից, աչքերից ջուր է հոսում, միւլիով վերցնում են և քաշում աչքի աղբււրակները, որպէսզի ջուրը դադարի հոսելուց:

Սպիտակ քուրիան գործ են ածուծ աչքի քորը կտրելու համար: Խաղողի զուռ (այսինքն խակ խաղող) թուփայի (այսինքն արճիճի ?) հետ դնում են կրակին, հալում, յետոյ երբ պաղում, պնդանում է, մանրում են, մաղում, և հաւի ոտի կաշուց շինած քսակի մէջ պահում, և հարկաւոր եղած դէպքում միլլով քաշում աչքերին:

Անուշահոտութեան համար չորացած մեխակը բուստի հետ անց են կացնում թելի վրայ և կապում վզին, հանդերձի տակ, այնպէս որ չի երևում, թէպէտ և հնումը երևացնում էին:

Ականջները ծակելը և գինտ անցկացնելը թէ հնումը և թէ այժմ շատ սովորական է:

Հանդերձ.—Նախ հագնում են շապիկ, շապկընկեր, ապա արխալուզ (խալուզ), որ իջնում է մինչև ծնկները և սրա վրայից դայրայ, Վերջինս կարում են չթից, շատ պարզ է, սեղմում է մէջքում և իջնում մինչև ոտները: Կուրծքը կոճկւում է չափրաստով: Սրա վրայից կապում են գոգնոց, երբ աշխատում են:

Ուններին հագնում են գուլպա և քոշ:

Տղամարդկանց հանդերձները միանգամայն նման են միւս տեղերի հայերի, մանաւանդ զանձակեցիներին: հանդերձներին, ուստի և զանց եմ առնում կրկին նկարագրելու, առաջարկելով կարգաւ իմ «Գանձակի գաւառ» աշխատութեան մէջ ¹⁾:

ԱՄՈՒՍՆՈՒԹԻԻՆ ԵՒ ՀԱՐՍԱՆԻՔԻ

ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հասակ.—Վայոց-ձորի բնիկները թէ հնումը և թէ այժմ ամուսնանում են աղջիկները՝ 13—17, իսկ տղաները՝ 16—35 տարեկան հասակում: Աւելի վաղ ամուսնանալու դէպքեր գրեթէ չէին պատահում, որովհետեւ 1) երկիրը լեռնոտ լինելով բաւական ուշ են հասունանում և 2) սարդաբը այս կողմերից իւր հարեմի համար աղջիկներ չէր հաւաքում, ուստի և բնակիչները ստիպուած չէին լինում իրենց աղջիկներին մատաղ հասակում ամուսնացնելու՝ հարեմն ընկնելու վտանգից ազատելու յուսով: Սակայն և

¹⁾ Բնակարաններն էլ գլխատուն են, ուստի տեսնել իմ «Զանգեզուրի» գաւառ աշխատութեան մէջ:

այնպէս՝ 18 տարին անց աղջիկը «պռաւած» էր համար-
ւում:

Ամուսնացողներէ հասակի համեմատքիւնը. — Գրեթէ առանց բացառութեան միշտ ամուսինն էր հասակով մեծ լինում կնոջից, այն էլ 5-15 տարի: Հազիւ էր պատահում, որ այրի տղամարդն ամուսնանար դեռահաս աղջկայ հետ, ինչպէս և՛ այրի կինը ամուրի երիտասարդի հետ:

Ամուսնացողներն ըստ ազգութեան. — Վայոց-ձորի բնակիչները չափազանց խոստափում են օտարազգիներին աղջիկ տալուց, իսկ նրանցից աղջիկ առնում են միայն այն դէպքում, երբ վերջինս ընդունում է լուսաւորչական հաւատը: Այսպէս՝ տեղական մի ռուս ոստիկան ամէն միջոցի դիմել էր մի քահանայի աղջկայ հետ ամուսնանալու, սակայն չի կարողացել յաջողեցնել, նրան ընդդիմադրել են ոչ միայն քահանան, այլև աղջիկը և ժողովուրդը:

Սաչիկում մի չափահաս աղջիկ իւր մօր վատ վարքի պատճառով ուզողներ չունենալով՝ սիրահարուել է մի Զովմաչումախեցի թուրք երիտասարդի վրայ, որ իրենց հարեանի տանը ծառայելիս է եղել: Երբ այս մասին իմացել են Սաչիկեցիները, իրենց միջից՝ մի գումար են հանգանակել, և տալով մի թեթեամիտ երիտասարդի՝ ամուսնացրել են այդ աղջկայ հետ, որպէսզի վերջինս դադարի թուրքին սիրելուց. սակայն աղջիկը ոչ միայն չի ընդհատել իւր յարաբերութիւնն այդ թուրքի հետ, այլև չորս ամսից յետոյ մօր ձեռնտուութեամբ նրա հետ փախել է: Գիւղացիները սաստիկ զայրացել են և ստիպել են մօրը հեռանալու Խաչիկից, իսկ հօրն այնքան թակել են, մինչև որ նա դիմել է ոստիկանին՝ և յետ խլել իւր աղջկան թուրք առևանգողի ձեռքից:

Նոյն Սաչիկ գիւղից Ամիրզադայի աղջկան փախցրել է մի քուրդ և անցել Տաճկաստան: Ամիրզադան իւր համադիւզացիների հետ սպանել է այդ քուրդի մի բարեկամին և մի քանի հոգի ուղարկել Տաճկաստան՝ իւր աղջկան:

որոնելու Սրանք Վանում գտել են այդ աղջկան ու քըր-
դին և երկուսին էլ սպանել:

Ինչպէս ասացի, բոլորովին ներողամտութեամբ են
վերաբերւում, երբ օտարազգի աղջիկը կամ տղան լուսա-
ւորչականութիւն է ընդունում և ամուսնանում հայի հետ:
Այսպէս՝ Ազնաբերդցի Սաչատուր Պիլիկուն (Փիլիպպոս)
փախցրել է գիւմուշխանեցի Սաֆար-Ալու եղբոր աղջկան,
տարել է ջմիրածին, լուսաւորչական մկրտել, և ապա հետը
ամուսնացել:

Բնիկները խուսափում են նաև աղջիկ տալու Դարա-
լագեազի գաղթականներին, որովհետև, ասում են, նրանք
վատ են հարս պահում, թէ՛ շատ են ճնշում և թէ՛ շատ
աշխատեցնում: Սակայն չեն քաշում գաղթականների
աղջիկը ուզելուց, գիտենալով որ նա՝ իրենց մօտ աւելի
լաւ վիճակի մէջ լինելով՝ գոհունակութեամբ կապրի:

Աղջիկ փախցնել.— Թէ անցեալում, և թէ այժմ տե-
ղի է ունենում աղջիկ փախցնելը, որի թէ պատճառները
և թէ փախցնելու կերպը միանգամայն նոյնն են, ինչ որ
Լօռիինը: ¹⁾

Օտորոցայ խազ.— Այս սովորութիւնը ևս եղել է հնու-
մը և այժմ էլ կայ: Սրա պատճառները և եղանակը ևս
միանգամայն նման են Լօռու սովորութեան ²⁾:

Ամուսնացողների փոխադարձ համաձայնութեամբ
մասին հնումը բոլորովին հոգս չէին քաշում: Նոյն իսկ
մեծ ամօթ էր համարւում, որ ամուսնացողները հետաքը-
քրուէին այս հարցով և կամ իրենց ցանկութիւնը յայտ-
նէին: Սրանց ծնողներն էին կատարում ընտրութիւնը և
կամ ընդունում կամ մերժում առաջարկը: Աղջիկն ընտրե-
լիս՝ ուշադրութիւն էին դարձնում նրա մօր վերայ, հետևե-
լով այն առածին՝ թէ «ծերիկը տես՝ գօտիկը առ, մէրիկը
տես՝ աղջիկն առ»: Իսկ տղայի արժանաւորութիւնը չա-
փում էին նրա հօր արժանաւորութեամբ. նախանձելի էլ

¹⁾ Տես իմ Բորչալուի գաւառն աշխատութեան մէջ:

²⁾ Անդ.

համարուում «հալալ կաթնակեր» հարսնացուն և «հօր որդի» փեսացուն:

Սակայն վերջին ժամանակներս երիտասարդներն իրենք սկսել են «սէր կապել», հարսնացու ընտրել, որին իրենց սէրը արտայայտելու համար ուղարկում են մի խնձոր: Եւ եթէ աղջիկն էլ բաժանում է նրա զգացմունքները, վերցնում է խնձորը և նրա մէջ չորացած մեխակներ ցցելով՝ յետ ուղարկում:

Թոնրի հատասնիք.—Թէպէտ Ղարաբաղում գոյութիւն ունեցող թոնրի հարսանիքի սովորութիւնն այս բնիկների մէջ չկայ այժմ, սակայն մօտիկ անցեալում դեռ ևս տեղի էր ունենում հետեւեալը, որ հաւանականօրէն դրա մնացորդն է.—Հարսը հօրանց տնից տղի տունը տանելիս՝ երեք անգամ պտտւում էր թոնրի շուրջը և չոքում համբուրում նրա շուրթը:

Աղջիկ ուղեղ.—Հարսնացուն ընտրելուց յետոյ նախ կողմնակի կերպով աշխատում են իմանալ թէ կըտան, ապա տղայի հօրեղբայրը կամ մօրեղբայրը և կամ մի ուրիշ մօտիկ ազգական, բայց ոչ երբէք հայրը, գնում է նրանց տունը և տան մեծից խնդրում աղջկայ ձեռքը:

Այս առաջարկը սովորաբար անում են հետեւեալ ձևով.

Աստու եւամրովը ուզում ենք ձեր աղջիկը մեր այս ինչ տղին:

Կամ՝ էկել եմ ձեր օջախից մի բուռը հող տանեմ:

Կամ՝ էկել եմ ձեր ճրագից մին կրակ տանեմ:

Որքան էլ տրամադիր լինեն տալու, այնուամենայնիւ իսկոյն խօսք չեն տալ, այլ մի քանի օր կը ձգձգեն, որպէսդի «գնան դան էւել տքանան»:

Մերժելիս էլ քաղաքավարութեամբ պատճառաբանում են, թէ «էս տարի կարալ չենք տալ, հացերնիս պակաս է», կամ «Մեր օջախի ճրագի պատրուքը հալա չենք պատրաստել», կամ «Մեր օջախի ճրագը չի վառուել այ-

սինչի տանը» և կամ ուղղակի՝ «Քուկորցրածդ մեզանում չկայ»:

Մինչև դրական պատասխան տալը խնամախօսներին զգուշանում են հիւրասիրել, որովհետև շուտ (խնամախօսին) հաց տաս՝ բետմա աղջիկդ էլ տաս»:

Վերջապէս երբ յայտնում են իրենց համաձայնութիւնը, խնամախօսները հանում են իրենց զրպանում պահած մի շիշ օղին՝ և շնորհաւորելով՝ մի մի բաժակ խմում, ապա վերադառնում, և նոյն օրուայ երեկոյին մի քանի ուրիշ տղամարդկանց և պառաւ կանանց հետ գալիս են աղջկայ տունը՝ բերելով իրենց հետ մի քանի շիշ օղի և միքիչ չոր մրգեղէն: Աղջկայ տէրն էլ հրաւիրած է լինում իւր մօտիկ ազգականներն ու ազգականուհիները: Տղայի կողմի ամենատարիքաւորը ուղղելով խօսքը աղջկայ կողմի ամենատարիքաւորին՝ խնդրում է աղջկայ ձեռքը, և երբ սա «Տօր, խէրը տես» ասելով յայտնում է իրենց համաձայնութիւնը, իսկոյն սկսում են խմել խնամախօսների բերած օղին և շնորհաւորում ասելով. «Աստուած շնորհաւոր անէ, Աստուած բարի վայելում տայ, ամէնի ազգային էլ բորջ (պարտք) լինի»:

Անմիջապէս՝ մի արծաթէ մատանի և մի եայլուղ յանձնւում է ամենատարիքաւորին, որ օղին խմելուց յետոյ տալիս է աղջկայ մօրը: Աղջիկը ոչ միայն ներկայ չի լինում, այլև տանը չի մնում, գնում է մի բարեկամի տուն: Բացակայ է լինում նաև նշանադրուող երիտասարդը: Փոքր ինչ յետոյ ընթրում են և ցրւում: Այս արարողութիւնը կոչւում է նշանդրեմ:

Բարգնաւ.—Մի քանի օրից յետոյ տղի ծնողները հրաւիրում են իրենց մօտիկ ազգականներին, ինչպէս և քահանային, հիւրասիրում սրանց մի թեթև ընթրիքով, և ապա սրանց հետ միասին գնում են հարսնացուի տունը, տանելով իրենց հետ բաւականաչափ մրգեղէն, կերակրոնք, մի գառան կամ ուլի խոռով (թոնրում խորոված գառ կամ ուլ), մի գլուխ շաքար, հարսնացուի համար մի ձեռք հանդերձ կամ մի բաղդաղի և մի զոյգ քօշեր: Հարս-

նացուի տանը, ուր նոյնպէս հրաւիրուած են լինում բարեկամ տղամարդիկ և կանայք, ընթրիք է տրուում, որի ժամանակ տղի տնից բերուած խրովը դրուում է երեցփոխի առաջ, սա էլ յօգուտ եկեղեցու մի բուրլի պահանջելով տղի տիրոջից՝ կտրատում է և բաժանում սեղանակիցներին: Ընթրիքից յետոյ առաջ են բերում տղի տանից բերուած շաքարը և մրգեղէնի հետ մի քիչ բաժանում, որ բերանները քաղցրացնեն: Ընթրիքից յետոյ հարսնացուն երեսը ծածկած նշանադրութեան ժամանակ բերուած եայլուղով՝ մի հարսի առաջնորդութեամբ դալիս է համբուրում բոլոր հրաւիրեալների ձեռքերը, սկսելով քահանայից: Երբ նա հեռանում է, երբեմն էլ հէնց նրա ներկայութեամբ, հարսնացուի կողմից մի ազգական վերցնում է մի ւփսէ և հրաւիրում փեսացուի կողմի ազգականներին «ետեսնանակ» — հարսի երեսը տեսնելու պատճառով նուէր տալ: Նախ տալիս է քաւորը — 2-3 ռ. և ապա միւսները: Ամեն անգամ նուէր հաւաքողը բարձր ձայնով կանչում է. «էլիկ (ժողովուրդ), ականջ դրէք, շէն մնայ մեր այսինչը, Աստուած նրա որդուն էլ էս ուրախութիւնը փոխ անէ, այսքան մանէթ. շէն մնայ, շէն կենայ»:

Վերջապէս՝ բոլոր նուէրները հաշուելուց յետոյ յանձնում են հարսնացուի հօրը: Այս գումարն իրաւունք չունեն ծախսելու, այլ օժիտի հետ վերադարձնելու են, և սա մնում է որպէս հարսի առանձին սեպհականութիւն:

Սրանից յետոյ հրաւիրուածները զրուում են, միայն փեսացուի հայրն ու մայրը գիշերում են այդտեղ. պարզ է, որ փեսացուն եկած չի լինում:

Հետեւեալ օրը հարսնացուի տանից հրաւիրում են երեկոյեան հարսին երեստեսնուկ տուողներին, ճաշ տալիս և մի-մի զոյգ գուլպա նուիրում, ի տրիտուր նրանց տուած նուէրներին:

Երբեմն կասկածելով թէ մի գուցէ փեսացուն յետ լինի՝ այն երեկոյին օրհնել են տալիս նշանը. — քահանան ընթրիքից յետոյ հարսնացուի ներկայութեամբ, առանց

փեսացուին, օրհնում է նշնի մատանին, զինով լի մի բա-
ժակի մէջ ձգած, և տալիս հարսնացուին, որ վերցնում
է և հեռանում, զինին խմում, ու մատանին դնում աջ
ձեռքի միջամատին, հաւատալով, որ այդ մատի երակնե-
րը միացած են սրտի երակներին, հետևապէս և՛ դրա ազ-
դեցութեամբ կարելի է սրտանց սիրել ամուսնուն։

Բարգեահից յետոյ փեսացուն մի գիշեր աներոջից ծա-
ծուկ դնում է իւր հարսնացուին տեսելու, տանելով իւր
հետ մրգեղէններ։ Զոքանչը ծածուկ ընդունում է նրան,
հիւրասիրում ձուածնդով և ցոյց տալիս հարսնացուն։ Եր-
բեմն՝ զոքանչներն էլ սաստիկ խստապահանջ են լինում և
ցոյց չեն տալիս հարսնացուն, այսպէս՝ Կնիշիկից մինը ե-
կել է Խաչիկ աներանց տունը, մինչև կէս գիշեր նստել,
տեսել է, որ հարսը առաջ չեն բերում, վեր կացել գիշե-
րով վերադարձել է իրենց գիւղ։

Սակայն այժմ գրեթէ բոլորովին վերացել է այս կեղծ
ամօթխածութիւնը և փեսացուներն օրը ցերեկով այցելում
են իրենց աներանց տուն, և մինչև անգամ մի քանի գիւ-
ղերում, ինչպէս Գնդեվազում, ընդունուած է փնտրական
կազմել, այսինքն հանդիսաւոր կերպով փեսին տուն հրա-
ւիրել. և այս կատարւում է այսպէս. Նշանադրութիւնից
մի քանի օր յետոյ հարսնացուի մայրը հրաւիրում է փե-
սացուին իրենց մօտ և սա քաւորի և մի քանի հասակա-
կից ընկերների հետ գնում է, դռան առաջ կանգնում և
ներս չի մտնում, մինչև որ զոքանչը ընդառաջ չի ելնում
և մի ծնած կով, կամ նոյնպիսի ոչխար, չի խոստանում
նուէր ուղարկել հարսանիքից մի քանի օր յետոյ։ Երբ փե-
սացուն ներս է մտնում, զոքանչը օրհնում է նրան ասե-
լով. «Մեր տունը, մեր մալ ու դովլաթը քեզ փէշքէշ, ոտդ
բարի լինի, Աստուած խէր տայ քեզ, դու և իմ աղջիկը
մի բարձի ծերանաք, հայր Աբրահամի հացն ուտէք, օխտը
որդով սեղան նստէք»։

Փեսացուի աները և միւս հասակաւոր տնեցիները
դիտմամբ բացախայում են։ Շուտով ընթրիք են տալիս,

որից յետոյ հարսնացուն և փեսացուն և հիւրերին թէյ է մատուցանում, շաքարի փոխարէն մեղր ածելով, որպէսզի նշանադրուածները քաղցը, սիրով լինեն: Սետոյ հիւրերը երեստեսնակ նուիրելով հարսնացուն գնում են, իսկ փեսացուն մի քիչ էլ մնում է հարսնացուի հետ փոքր ինչ ժամանակ անցկացնելու:

Բաժին կամ հարսնախայ.—Առաջները վեց ամսից մինչև 3 տարի նշանադրուած էին մնում, և այս երկար ժամանակամիջոցում նշանաւոր տօներին խնամինները միմեանց ընծաներ էին ուղարկում, որոնք քաժին կամ հարսնախայ, փեսախայ էին կոչւում: Այժմ հետզհետէ կարճանում է այս ժամանակամիջոցը և վերանում է այդ բաժին ուղարկելու սովորութիւնը:

Ջրօրհնէֆին փեսացուի տանից ուղարկւում է հարսնացուի տունը 10 ֆունտ բրինձ, մի քանի ֆ. իւղ, մօմ 20 կոպէկ քահանային աջհամբոյր տալու:

Տեսառնընդառային հարսնացուի զոքանչը մի քանի բարեկամ կանանց հետ 14 հատ գաթայ, ադանձ և՛ մի ղլխի մետաքսեայ թաշկինակ առած գնում է խնամոնց տունը և հարսին ու խնամի կանանց տանում եկեղեցի: Այստեղից ձեռներին վառած մօմեր վերադառնում են հարսնացուի տունը, բարձրանում կտուրը և հարսնացուն երեք անգամ թոցնում տէրնդազի դէզի վրայից, որպէսզի ապագայում շատ զաւակներ ունենայ:

Բարեկենդանին տղայի տանից ուղարկւում է գաթայ, մաղայ, հալուայ, ադանձ, եայլուղ, հայելի, քոշ: Հարսնացուի տանից էլ վերադարձնում են խոնջան, գուլպաներ, քիսա, դաւուղներ գնելով:

Ծաղկազատդին փեսացուի տանից գաթայ, հալուայ և տապակած հաւ է ուղարկւում: Հարսնացուն անշուշտ եկեղեցի են տանում, ուր նրա ձեռքը մօմ են տալիս ու սկեսուրը և տալերը փող (20-ական կոպէկ) են նուիրում:

Ջատկին դարձեալ տղայի տանից ուղարկւում է ներկած ձուեր (մօտ 100 հատ), 10 ֆունտ բրինձ, 3 ֆ. իւղ,

10 զոյգ մոմ, մի զոյգ կօշիկ, մի մետաքսէ գլխի թաշկինակ, հայելի, չոր մրգեղէններ և մի բուբլի փող աջհամբոյրի համար: Ապա նախ տղայի և յետոյ հարսի տնեցիք այցելում են միմեանց և շնորհաւորում Զատիկը:

Համբարձմանը տղի տնից ուղարկւում է ձու, գաթայ, հալուայ և մի թաշկինակ, իսկ հարսնացուի տանից յատուկ փեսացուին՝ որ ընկերներէ հետ քէֆ անէ՝ գաթայ, հալուայ, հաւ, դոլադ և այլն:

Վարդապետին.—տղայի տնից մրգեղէններ և դայմադ:

Ս. Խաչին.—դարձեալ տղի տնից խըրով—թոնրի մէջ, ձաւարի ճաշի վրայ քաշ տուած և խորոված մի ուլ,—գաթայ, հալուայ, մրգեղէններ և հարսնացուին մի հանդերձեղէն:

Քաւոր.—Այս բնիկների մէջ ևս քաւորը տոհմական է և փոխւում է միայն այն ժամանակ՝ երբ սանամայրը երեխաներ չի բերում և կամ շարունակ աղջիկներ է ունենում և կամ երեխաները մեռնում են: Այսպիսի դէպքերում ասում են, որ քաւորի ոտը խէրով չի: Նոյն ակնածութիւնն ու չխօսկանութիւնը, որ ունեն միւս գաւառների սանամայրերը դէպի իրենց քաւորներն այստեղ ևս տիրում է, մինչև իսկ Խաչիկ գիւղում թառանք երեսը ծածկում էր, որովհետև քաւոր Ղազարը հանդիպակաց լերան վրայ, երկու վերստ հեռու գութանն էր քշում:

Տօներին քաւորին բաժին (նուէր) ուղարկելու սովորութիւնն այս բնիկների մէջ չկայ:

Բարգեւան կտեֆ.—Հարսանիքից 8-10 օր առաջ փեսացուի հայրը մի քանի բարեկամների և քահանայի հետ գնում է հարսնացուի տունը, տանելով 5-10 շիշ օղի, ուր հրաւիրւում են նաև աղջկայ մօտիկ մի քանի բարեկամներ: Փեսացուի օղին խմելուց և հարսնացուի ճաշը ուտելուց յետոյ՝ քահանայի առաջարկով երկու կողմերն էլ ընտրում են մի քանի միջնորդներ (վէթիւներ), որոնք երկար և յամառ սակարգութիւնից յետոյ որոշում են թէ՛ պսակի օրը և թէ՛ ինչ է տալու փեսացուի հայրը՝ հարսնացուի հօրը, որ մօտաւորապէս հետևեալն է լինում.

Բաշլըդ—30-50 բուրլի:

Եօթը խալաթ.—1. մի արխալուղացու:

2. Եօթը գազ գիւղի չիք հարսնացուին դայրացու:

3. Երեք գազ դանաւուզ՝ փեսացուի համար մի շապիկ կարելու:

4. Մի գոյգ բոշ հարսնացուի հօր համար:

5. Մի լաչակ կամ գլխի շալ հարսնացուի մօր համար: Այս նուէրը կոչւում է կաթի գիւն:

6. Մի չուխայ հարսնացուի եղբօր համար, որ եղբօր կապայ է կոչւում:

7. Մի մետաքսէ եայլուղ հարսնացուոր համար:

2-3 փութ միս կամ մի ոչխար:

2-3 փութ գինի և ¹/₂-1 փութ օղի:

Շորմէլ.—Կատարւում է պսակից մի քանի օր առաջ և միանգամայն նման է խոռում տիրող սովորութեան. փեսացուի մայրը հրաւիրում է բարեկամ կանայք, հիւրասիրում է նրանց ճաշով, ապա ցոյց տալիս կտորեղէնը և ընտրում մի բախտաւոր համարուած կին՝ շորերը ձեւելու: Սա էլ մկրատը դնում է կտորի վրայ, բայց չի կտրում, ասելով թէ լաւը չէ՝ չի կտրում, մինչև որ թէ փեսացուի մօրից և թէ միւս կանանցից նուէրներ չի ստանում: Ապա կանանցից շատերը մի մի բան վերցնում են իրենց տանը կարելու:

Սովորաբար շորձեւէքի օրը փեսացուն բաւորի և քահանայի հետ այցելում է գիւղի սգաւոր տները, ուր քահանան հոգոց է ասում, քաւորը իւր հետ վերցրած օղուց մի մի բաժակ տալիս է բոլորին ու մխիթարանք խօսում, և փեսացուն հրաւիրում է սգաւորներին իւր հարսանիքին:

Այուր-մաղեխ.—Հարսանիքն սկսելու նախորդ օրը, սովորաբար հինգշաբթի, փեսացուի տանը հրաւիրւում են բարեկամ կանայք, որոնք ճաշելուց յետոյ ընտրում են մի բախտաւոր, կսկիծ չը տեսած, ամուսինը գլխին (կենդանի), շառակաւոր կին և խնդրում հարսանիքի ալիւրը մաղել: Սա էլ երկար բարեմախտութիւններ անելուց յետոյ սկսում

է մաղել: Ուրիշ ծիսակատարութիւններ չկան, ինչպէս ուրիշ տեղեր, միայն հացը եփելիս հացթուխին նուէրներ են տալիս մի քանի կոպէկ և առաջին թխուած հացը, հընումը, վերցնում պահում էին, և երբ հարսին բերում էին սկեսրանց տղան, այդ հացը տալիս էին նրան՝ որ բրդէ մի ափսէի մէջ և յետոյ շաղ տայ գետնին: Ապա մի աւել էին տալիս ձեռքը, որ աւել է այդ հացը. եթէ դէպի ներս, օջախն էր. աւելում, գուշակում էին որ բախտաւորութիւն է բերելու, իսկ եթէ դէպի դուրսը՝ սկսում էին տրտնջալ, որ հարսը քանդելու է այդ տունը:

Գինաքալիւն.—Նոյն հինգշաբթի երեկոյեան հրաւիրում են մօտիկ ազգական տղամարդկանց և նրանց միջից ընտրում մի մարմնակ (մառանապետ), որի կառավարութեան է յանձնուելու գինին, օղին, հացը, պանիրը, միսը և այլն:

Սա էլ ընտրում է երկու օգնական, որ աղիի են կոչւում և երկու ուրիշը, որ ֆռակլի (օգնական) են անուանւում:

Սաղիները պարտականութիւնն է մի ձեռում գաւով գինի, միւսում մի ափսէի մէջ դրած երկու բաժակ բրդնած գինի բաշխել հրաւիրեալներին, իսկ քոմակչիներինը լիքը գաւը ձեռին կանգնել սեան մօտը, և երբ սաղու գինին պարպի, այդ լիքը տայ նրան և նրա դատարկ գաւը տանի մառանապետին: Բացի սրանցից ընտրում են նաև մի քանաղա-սովորաբար տան մէջ ամենից յարգուածին, մի քեչկանի (խոհարարուհի) պառաւներից և սրան մի քանի օգնական կանայք, խալաք կանչող և 2-10 կանչողներ, այսինքն հրաւիրողներ:

Ապա սրանց բոլորին հացով հիւրասիրելուց յետոյ, հրաւիրում են, որ ընտրուածներն իրենց պաշտօնն ստանձնեն:

Սկսում են գինին կարասից գաւերի մէջ ածել, պատրաստել, ուստի և՛ այս սովորութիւնը կոչւում է գինաքալիւն:

Հետևեալ օրը, ուրբաթ, կէսօրին, կանչողները շրջում են ամբողջ գիւղը և Թամադայի ցուցմամբ մարդկանց հարսանիքի հրաւիրում:

Ով մտադիր է լինում ամբողջ հարսանիքին մասնակցելու և կանչ (նուէր) տալու՝ դալիս է, ով մտադիր չէ՝ մերժում է, ասելով. «Աստուած շնորհաւոր անէ»:

Հրաւիրեալներին ճաշով հիւրասիրելուց և լաւ խմեցնելուց յետոյ՝ հրաւիրում են գաւիթը, ուր դառուլ զուռնէն շարունակում է ածելու իսկոյն առաջ են բերում մի եզ: Թամադան բղաւում է. «Օրհնեա՛ Տէր, պատուելի ժողովուրդ, խնդրեմ իրաւունք տուէ՛ք եզը մորթենք»:

— Իրաւունք ա, գնացէ՛ք մորթէ՛ք, Աստուած՝ շնորհաւոր անէ, ձայն են տալիս այս ու այն կողմից:

Եզի ոտները կապում, վայր են գլորում, իսկոյն դառուլչին ոտը դնում է եզան վզին, թոյլ չտալով մորթել, մորթողն էլ բարձրացնում է դանակը և բղաւում. «Դանակը կտրում չի, խալաթս բերէք»: Տանտէրը Թամադի հրաւերով մի թաշկինակ կամ 20-30 կ. նուիրում է մորթողին, այդքան էլ թմբկահարին, որը ոտը յետ է քաշում և թոյլ տալիս մորթելու:

Անմիջապէս աղջիկները և հարսները սկսում են կաքաւել, «ձեռնահախ խաղալ»: Այստեղ կանգնած է լինում նաև Թագաւորը իւր քաւորի և փեսեղբօր հետ: Երբեմն նախ քան եզը մորթելը՝ Թագաւորը մի գրչահատով փոքր ինչ կտրում է եզան վիզը, արիւնոտում դանակը և բերնին դնելով պոչից քաշած մի մաղ՝ փակում, դնում գրբպանը: Այսպէս փնում է մինչև առաջապստի երեկոն, երբ նորից բաց է անում դանակը, և այս բոլորն այն յուսով, որ կապ չընկնի—չկորցնի առնականութիւնը:

Կաքաւին յաջորդում է պարը—եայլին—և մի սաղի, պարի մէջ տեղ կանգնած, գինի է մատակարարում պարողներին:

Պարը շարունակում է մինչև մութն ընկնելը, երբ դառուլ զուռնի առաջնորդութեամբ կաքաւելով ու պարե-

լով մի քանի երիտասարդներ ու աղջիկներ մինի մէջքին բարձած 3 փ. միսն ու բարգեահկտրէքի երեկոյին խոտացած նուէրները՝ տանում են հարսնացուի տունը, ուր փոքր ինչ պարելուց և հիւրասիրութեւոյց յետոյ վերադառնում են։ Այս նուէրներ տանողը կոչւում է աղուես, և սա աշխատում է հարսնացուի հաւանոցը մտնել, մի քանի հաւ ծածուկ մորթել և հետը բերել։ Նրբեմն մաի փոխարէն մի կենդանի ոչխար են ուղարկում հարսնացուի տունը, այս դէպքում երկու մոմ են վառում նրա եղջիւրների վրայ, և վզին մի հայլուղ փաթաթում։

Գլուխ վերանել։—Միսը հարսնացուի տուն տանելուց յետոյ մակարները վերադառնում են, շրջապատում թագաւորին, նրան նստեցնում մի փայտէ աթոռի վրայ, որի տակ մի վառած մոմ են դնում, կողքերին էլ կանգնում են քաւորն ու փեսադէրը։ Գլուխ է սափրելը, գինով թրջում թագաւորի գլուխն ու երեսը, և «Աստուած շնորհաւոր անէ» ասելով սափրում, յետոյ միւրուքից մի քիչ թողնում է և կանչում. «էկէք, թագաւորի հաւատարմի, էկէք, ածլիս կտրում չի»։ Նախ քաւորը, ապա փեսադէրը և բարեկամները համբուրւում են թագաւորի հետ, «Աստուած շնորհաւոր անէ, բարով վայելես» ասում, և մի քանի կռպէկ դնում նրա ձեռք տուած հայելու վրայ։ Մի տղայ էլ, առնելով թագաւորի տնից մի թաշկինակ, ձեռին բռնած պար է դալիս և ապա նուիրում սափրելի։

Զի պահանջւում, ինչպէս ուրիշ տեղեր, որ քաւորն էլ անպատճառ սափրուի։

Նոյն երեկոյին մարդ կանչողները թամաղուկարգադրութեամբ ցրւում են գիւղը և հրաւիրում հարսնակորներին. տան մեծերից մինն էլ գնում է եկեղեցի և ժամուորներից ում ցանկանում է՝ հրաւիրում է։

Եկողները ծալապատիկ նստում են թամաղայի ցոյց տուած տեղերում։ Մէջ տեղում, թոնրի վրայ, դրւած է լինում կաթսաները, որոնց մէջ եփւում են եթէ ուտիս է՝

շիրա, իսկ եթէ պատ՝ շորվա: Տան մի անկիւնումն էլ քաղոր է կապած լինում, և մի բարձ դրած, որի վրայ կանգնած է լինում թագաւորը, կողքին քաւորն ու փեսաղբէրը: Սրանք նստում են միայն այն ժամանակ, երբ քահանան իրաւունք է տալիս և կանգնում ամէն անգամ, երբ մի ծերունի ներս է մտնում: Մի քիչ յետոյ ընթրում են, որի ժամանակ խմում են երկու խնամու, թագաւոր-թագուհու և քաւորի, ինչպէս և ամբողջ հասարակութեան և հարսնեւորների կենացը, չմոռանալով ոչ ոքի, որովհետեւ առածն ստում է: Քթուխսը ճտերով, շուրթը բոլորով: Ընթրիքից յետոյ մի գաւ գինի և մի բաժակ դնում են մէլիքի (տանուտէրի) առաջ, սա էլ ածում է և հիւրասիրում ում ցանկանում է:

Այս ժամանակ թագաւորը, քաւորը և փեսաղբէրը գալիս քահանայի առաջ չոքում են, սրանց մօտ էլ բերում դնում են մի սկուտեղով թագաւորի հանդերձը՝ չուխան, արխալուղը և գդակը:

Քահանան օրհնում է հանդերձը և ստանում խաչհամբոյր, որ դնում են Մաշտոցի վրայ: Յետոյ քահանան ձայն է տալիս. «Ազապ-պաշին ճվ ա ընում, գայ:» Ցանկացողներն առաջ են գալիս. սկսում է սակարգութիւն. վերջապէս երիտասարդներից մինը վճարում է քահանային 20 կ.-1 բ. և վերցնում հանդերձների մօտ դրուած թուրը, կապում իւր մէջքին, և յետոյ հանում թագաւորի չուխէն և հէնց այստեղ, բազմութեան մէջ, հագցնում է արխալուղը հագի արխալուղի վրայից, և յետոյ չուխէն, միայն մի թևը չի անցկացնում. ապա բղաւում է խալաթ բերէք: Եւ երբ մի թաշկինակ են նուիրում, հագցնում է և՛ թևը: Յետոյ այս ազապ-պաշու առաջնորդութեամբ քաւորը, թագաւորը և փեսաղբէրը համբուրում են քահանայի և հարսնեւորների ձեռքերը: Վերջը քահանան խաչակրնքում է գդակը և իւր ձեռքով դնում թագաւորի գլխին: Անմիջապէս դաւուլ-գուռնան նորից սկսում է նուագել և կաքաւն ու պարը վերսկսում են:

Հետզհետէ հասակաւոր հարսնեւորները ցրւում են, և սրանցից պատուաւորներին «մարդ կանչողները» մոմերը ձեռներին ուղղեկցում են մինչև տուն:

Հինա Տանել.—Մի տասնեակ տարի առաջ այս սովորութիւնը դեռ ևս պահպանւում էր, բայց այժմ բոլորովին վերացել է: Ազապ-պաշին դաւուլ զուռնու առաջնորդութեամբ դնում էր քաւորի տուն և նոյն ձեով բերում հինան մի սկուտեղի մէջ քաւորակնոջ գլխին դրած: Այդ կինը հինան խաղացնում էր, այսինքն իւր գլխին դրած պար էր գալիս, յետոյ դնում էր քահանայի, ծերերի առաջ, որոնք «Աստուած շնորհաւոր անէ» ասելով ճկոյթները ճխտում էին հինի մէջ և մի քանի կոպէկ ձգում սկուտեղի վրայ՝ յօգուտ այդ բերող կնոջ: Յետոյ տանում էին թագաւորին, որ նոյնպէս նուէր էր տալիս և ձեռները հինա դնում:

Ապա նոյն դաւուլ զուռնով և՛ նոյն, քաւորակնոջ գլխին դրած հինան տանում էին հարսնացուի տունը, ուր նոյն կերպ պար էին ածում, նուէրներ հաւաքում և հարսի ձեռները հինա դնում:

Հետեւեալ օրը, շաբաթ առաւօտեան, փեսացուի տան կտրին դաւուլ զուռնան ածում է «սահարի» եղանակը, որ նշան է թէ ճաշը արդէն պատրաստ է. իսկոյն միևնոյն հարսնեւորները գալիս են հարսնետուն և բռնում իրենց նախկին տեղերը: Անմիջապէս սաղիները մի ձեռքում կոնգ, միւսում սրուակ, ուսին էլ մի սրբիչ ձգած հերթով մօտենում են հարսնեւորներին և ջուր ածում ձեռներին՝ լուացուելու: Ապա մի մի բաժակ օղի են մատուցանում, որ «Աստուած շնորհաւոր անէ» ասելով խմում են: Մի քիչ յետոյ սփռոցները ձգում են և մատուցանում են բոզբաշ ու տոլմա: Թամազի առաջարկով խմում են 1) երկու խնամինների, 2) թագաւորի և թագուհու ու 3) Մայր աթոռի ու միաբանութեան, և վերջում՝ շոշրիմների (հարս բերողների) կենացը: Հարսնացուի տունը դնալ ցանկացողները գինիով շնորհակալութիւն են յայտնում: Ապա դա-

ուղ զուռնան դուրս է դալիս և սկսում դռանը ածել, մինչև որ «կաղնաւորը»—ծառայողները—ևս ճաշեն: Հարսնացուին նուէր տարուելիք հանդերձներն էլ—մի դէյրա, վերարկու, քոշ, մէտակ (երեսի ծածկոց), քամար, չամիչ և այլ մրգեր—մի սկուտեղի վրայ դարսած հանում են դուռը: Այս ժամանակ քաւորի քոյրը կամ հարսը պար է դալիս և «կանաչ կարմիր» (մի կարմիր թաշկինակ) կապում թագաւորի կրծքին, աջ ուսից ձախ կոնստակը, ապա վերցնում է հարսի շորերի խոնչան (սկուտեղը) և թագաւորի, քաւորի, փեսեղբոր և հարսնեւորների հետ, դաւուլ զուռնի առաջնորդութեամբ, դնում հարսնացուի տունը, ճանապարհին «կոնախաղ» (կաքաւ) և եայլի (պար) պաւելով, երբեմն և՛ հրացան արձակելով: Փեսացուի հայրն ու մայրը չեն գնում:

Հարսնացուի տանն արդէն հաւաքուած են լինում ազգականները և երբ «հարս բերողները» դալիս են, սըրանք ընդ առաջ են ելնում, սկսում են պարել: Քաւորի քոյրը ևս կաքաւում է՝ խաղացնելով հարսնացուի շորերը: Ապա մտնում են ներս, նստում: Շոր բերողը մի խալաթ (մի թաշկինակ նուէր) ստանալով դնում է հանդերձը քահանայի առաջ: Մի քիչ յետոյ հարսնացուի կողմից ևս ճաշ է տրւում այս բոլոր հարսնեւորներին. մատուցանում են միայն բոգրաշ: Այստեղ օղի չի բաշխւում, այլ միայն գինի: Սեղանը կառավարում է հարսնացուի թամազան, որ նոյնպէս նախապէս ընտրուած է լինում: Ծաղի ժամանակ թագաւորը իւր քաւորի և փեսեղբոր հետ նըստած է լինում յատկապէս իրեն համար պատրաստուած քախսի վրայ, որի ծայրին էլ նստում է ազապ-պաշին, շարունակ հսկելով, որ թագաւորի քոշերն ու վերարկուն չգողանան:

Թագաւորը գլխարկը գլխին ծանր ու մեծ նստում է, նա չի վերցնում գլխարկը, որովհետև նա օրհնուած է քահանայից և փոխարինում է թագին, նա այն կրում է նաև

եկեղեցում¹⁾։ Նա և՛ հաց չի ուտում, մինչև որ աները չի մօտենում և մի ոչխար կամ մի այլ նուէր իրը «բերան-բացէք» տալիս։

Ճաշից յետոյ քահանան օրհնում է հարսնացուի հանդերձը, խաչամբոյր հաւաքում։ Ապա հարսնաքուրը, որ սովորաբար լինում է հարսնացուին կար ու ձև սովորեցնողը, վերցնում է հանդերձը և տանում, տան կապերտով առանձնացրած մի անկիւնում հազցնում հարսնացուին։ Յետոյ կանչում են քաւորին, որ 50 կ.-3 ռ. նուէր տալով հարսնաքրոջ, վերցնում է հարսնացուի գօտին, երեք անգամ պտտեցնում գլխով և «Աստուած երեք տղայ մի աղջիկ տայ» ասելով կապում մէջքին ու վերջը՝ Աստուած շնորհաւոր անէ բոլաւում։

Մինչ այս՝ բազմութեան մէջ հարսնացուի տանեցիներէից մի կին պարում է և մի կանաչ թաշկինակ կապում թագուորի կրծքին, ձախ ուսից՝ աջ կոնատակը, արդէն կապած կարմիրի վրայ, որով և՛ լրանում է «կանանչ կարմիրը»։ Ապա այդ միենոյն անձը մի մի զոյգ գուլպա է դնում թագաւորի, քաւորի և փեսեղորք առաջ, որոնք անմիջապէս հագնում են և իրենց հները նուիրում թագաւորի քոչերը պահպանող ազապ-պաշուն։

Յետոյ փեսացուի կողմից մի ծերունի բռնում է հարսնացուի կոնից և բերում, կանգնեցնում փեսացուի կողքին։ Քահանան ձեռք-ձեռքի է տալիս և օրհնում։ Յետոյ հարս ու թագուոր խոնարհւում են, համբուրում հարսնացուի ծնողներին ձեռքերը և շարժւում դէպի դուռը, սակայն դռան առաջ կանգնած է լինում հարսնեղբայրը և չի թոյլ տալիս անցնելու, մինչև որ մի քանի բուբլի նուէր չի ստանում։ Այս միջոցին էլ դաւուլ զուռնան ածում է՝

Տանում են, տանում են, տանում են,

Աղջիկը մօրից հանում են երգի տխուր եղանակը։

¹⁾ Հնումը եղեգնեայ փոքրիկ խաչի վրայ մետաքսէ գոյնըգ-գոյն թելեր էին փաթաթում, ցցում մի խնձորի կամ նռան մէջ և դնում այդ գլխարկի ծայրի մէջ։

Հարսնացուի մայրը սկսում է հեկեկալ:

Հարսնեւորներն ահագին աղմուկով, հրացաններ արձակելով, պարելով ու կաքաւելով աղապ-պաշու պարզած դրօշակի¹⁾ առաջնորդութեամբ գնում են եկեղեցի: Թագաւորի աջ կողմից գնում է քաւորը, ձախից՝ փեսադրբը, իսկ յետեից թագուհին՝ աջ կողմում հարսնաքուրը, ձախում՝ հարսնադրէրը: Հարսնաքուրը բռնում է թագաւորի չուխից, որպէսզի թագաւորի և թագուհու միջով մարդ չանցնի, ապա թէ ոչ՝ «թագաւորը կապ կընկնի».—կը կորցնէ առնականութիւնը:

Շատ անգամ «հարսերողները» հարսնացուի տանից կճուճի խփեր և գաթայ են գողանում, ու ճանապարհին պարելով երեան հանում, և այս այն յուսով, որ թագուհին բերանը խփի պէս խուփ Վինի, սկեսրոջը դիմադարձութիւն չանի, և նրա բաղդը հացի, գաթի պէս դամթով լինի:

Մի քանի սաղիներ էլ ձեռներին մի-մի ափսէի վրայ դրած բաժակներ ու մրգեղէն՝ սրան նրան գինի են տալիս, երբեմն էլ մօտենում են թագաւորին և մինչդեռ գինու բաժակը մօտեցնում են նրա շրթունքներին, բոլոր շրջապատողները բարձր ձայնով կանչում են. «Լուսը լուսաւորչին, հաւատը Գրիստոսին, օրհնեալ է Աստուած, անոջ, անոջ, անոջ. ուրայ»:

Երբ մօտենում են եկեղեցու դռանը, քաւորը մի քանի կոպէկ է նուիրում ժամակոչին՝ որ փակած դուռը բանայ, յետոյ հանում է իւր կողքից կախած թուրը և ծայրը դնում է դռան կամարին, և այդպէս բռնում, մինչև որ թագաւորն ու թագուհին անցնում են: Այսպէս և ուրիշ դռներից անցնելիս թրով խաչաձև գիծ է քաշում դռան գլխին: Այստեղ քահանան սկսում է կատարել պսակի խորհուրդը, իսկ դրսում մականները շարունակում են պարել, գօտեմարտել: Սրանցից մի քանիսն էլ հսկում են, որ ոչ ոք

¹⁾ Գաւազանի ծայրին մի մեծ թաշկինակ կապած:

եկեղեցու կտուրը քար չձգի, որպէսզի թագաւորը չկապուի, չեն թոյլ տալիս որ քառասունքոտ կին կամ նոր պսակուած երիտասարդ, հարս, եկեղեցի մտնի, որպէսզի հարսնացուն քառասունքակոխ չլինի (ամուլ մնայ, կամ երեխաները չապրին): Եկեղեցումն էլ թագաւորի ազգական պառաներից մինը մի կողպէք երեք անգամ կողպում է, բաց աւում և ապա կրկին կողպում և պահում գրպանում, որ թագաւորը կապ չլինի: Այս կողպէքը արձակում են առագաստի օրը:

Եկեղեցում, երբ քահանան սուրջաւոր ձգում է թագուհու ու թագաւորի գլխին, վերջինս 1—5 ր. իբր նուէր դնում է թագուհու բոխ մէջ: Պսակի խորհուրդը կատարելուց յետոյ քահանան Աւետարանը տալիս է թագաւորի, խաչը քաւորի և մի մօմ թագուհու ձեռքերը և հրաւիրում հարսնետոհմերին խաչամբոյր ձգել:

Ապա թագաւորի վրան շուրջառ. ձգած¹⁾, Աւետարանը և երկու վառ մօմ ձեռներին դուրս են գալիս եկեղեցուց և միևնոյն կերպ, միայն տարբեր փողոցով, վերադառնում են հարսի տունը: Ծանապարհին գառ, ոչխար են բերում և թագաւորի առաջ պարկեցնելով դանակը քաշում են, որ մորթեն, «թագաւորին մատաղ» անեն, բայց քաւորը դրամական նուէր է տալիս և չի թողնում մորթելու: Բարեկամներն էլ «խոնչա» են բերում, այսինքն մի սկուտեղի մէջ դրուած մրգեր, ձուածեղ, հալուայ, եփած ձուկ, հաւ, գինի են բերում և հիւրասիրում ինչպէս թագաւորին, այնպէս և հարսնետոհմերին: Պարը, գօտեմարտը և հրացանաձգութիւնը աւելի սաստիկ է տեղի ունենում: Վերջապէս հասնում են հարսի տունը: Հարսնամէլին ընդ առաջ է գալիս, մի զոյգ գուլպա խալաթ տալիս քահանային, համբուրում թագաւորի ձեռի Աւետարանը, վերցնում մօմերը, հանգցնում և տալիս ժամհարին. ապա համբուրում է նորապսակներին և ներս հրաւիրում: Հարսը անմիջապէս առանձնանում է իւր սովորական անկիւնում, իսկ փեսան

1) Յաջիկում այլ ևս չեն ձգում, այլ միայն Գնդեմազում:

իւր փոքրիկ շքախմբով նստում է թախտի վրայ և հարսի բարեկամ կանանց հետ ժամանակ անց կացնում, որովհետեւ բոլոր հարսնետոհները խկոյն ցրւում են:

Կանանց համար ամենալաւ առիթ է բացւում փեսին մօտից տեսնելու, նրա հետ խօսելու, ուստի և հաւաքւում են նրա շուրջը, գուլպա, քիսա, տոլաղ, թաշկինակներ նըրան նուիրում իբր բերանբացէք և իրենց հետ խօսել տալիս: Փեսան էլ իւր կողմից մրգեղէններ է բաժանում նըրանց ու մօտիկներին թաշկինակներ նուիրում: Դարձեալ սկսւում է կեր ու խում, և այս անգամ փեսան հիւրասիրւում է մեղրախառն ձուածեղով:

Երեկոյեան մարդ կանչողները դարձեալ հրաւիրում են հարսնետոհներին թագուորի տունը, ուր ընթրում են և յետոյ, ցրւում բացի երիտասարդներից, որոնք դաւուլ գուռնի առաջնորդութեամբ գալիս են հարսի տունը, թագուորի հետ միասին զուարճանալու, ուտելու, խմելու: Երբ ուշ գիշերին սրանք ևս ցրւում են, թագուորը միայն մնում է այստեղ գիշերելու: Եւ երբ տանեցիկները ընում են, փեսայի համար մի առանձին անկիւնում կամ ուրիշ սենեակում անկողին են պատրաստում, ու տան հարսնետրից մինը նորահարսի կռնից բռնած՝ բերում է փեսայի մօտ ու ինքը հեռանում: Թագուորը մի նուէր է տալիս հարսին իբր «բնաւնդացե՛ք», որ իրեն հետ խօսի, որից յետոյ սիրախօսում են մինչև լոյս:

Կանչ.— Կիրակի առաւօտեան մարդ կանչողները դարձեալ հաւաքւում են հարսնետոհներին թագուորի տունը և այստեղից դաւուլ-գուռնի առաջնորդութեամբ, պարելով, հրացան արձակելով գնում հարսի տունը: Այս անգամ արդէն թագուորի հայրը նոյնպէս գնում է, իսկ մայրը՝ ոչ: Մի թեթեւ նախաճաշիկ անելուց յետոյ թագաւորի տանից բերուած գինին սաղիներն ածում են բաժակները և տալիս թագուորին, իսկ սա՝ բաժանում է ծերունիներին և պառանքներին, նրանց ձեռը համբուրելով, սրանք էլ երկար բարեմաղթութիւններ անելով խմում են: Մի քիչ յետոյ

էլ նորահարսն է առաջ գալիս և համբուրում նախ ծնողներին և ապա միսներին ձեռները, յետոյ արդէն թագուորը քաւորի և փեսեղբոր հետ առջևից, իսկ նորահարսը հարսնեղբոր և հարսնքրոջ հետ՝ յետևից ուղևորւում են դէպի թագուորի տունը։ Նորափեսայի հայրը փոքր ինչ մնում է նորահարսի տանը նրա ծնողներին մխիթարելու և թոյլ չտալու հարսնամօրը շատ լաց լինելու։

Նորապսակների այս գնացքը ամենից հանդիսաւոր և ամենից աղմկալիկն է լինում։ Պարում են, կաքաւում, հրացաններ արձակում, բարեկամները խոնչանք են բերում, սա ու նա գառ, ոչխար բերում մատղելու։ ձի են բերում, իբր նուիրում են, քաւորից խալաթ ստանում։ Երբեմն էլ կտրիճ երիտասարդները կտրում են ճանապարհը և առաջարկում քաւորին կամ կտրիճ դուրս բերել իրենց հետ գօտեմարտելու՝ կամ խալաթ տալ։ Շատ անգամ մակարները յանձն են առնում գօտեմարտել, գնացքը կանգ է առնում, հարսնետոնները շրջան են կազմում և գօտեմարտիկները փորձում են իրենց ուժերը, եթէ հրաւիրող գօտեմարտիկն է յաղթում, քաւորը մի խալաթ է տալիս նրան իբր տուգանք, իսկ եթէ մակարը՝ մի բաժակ գինի են տալիս և գովաբանելով նրան՝ առաջ անցնում։

Երբ մօտենում են թագուորի տան դռան, կտուրից մինը, յաճախ թագուորամէրը, մրդեղէններ է շաղ տալիս նորապսակների գլխին, հարսնետոնները խոնւում են և սկսում ժողովել։ Թագուորամէրը ընդառաջ է գալիս, համբուրում թագուորին ու հարսին և մի նուէր, օր. մի թաշկինակ, նուիրում հարսնքուրին, յետոյ թագուորահէրն է գալիս, նոյնպէս համբուրում թագուորին ու թագուհուն և մի նուէր, օր. մի ոչխար, ձի, չուխայ և այլն, խոստանում տալ հարսնեղբորը։ Երբեմն բարեկամ կանայք էլ մի-մի թաշկինակ կամ շալ բերում ձգում են նորահարսի գլխին՝ իբր նուէր։

Ի վերջոյ նորապսակները մտնում են ներս, անցնելով քաւորի թրի տակով։ հարսը գնում է մի առանձին

սենեակ, ուր յատկապէս իրեն համար տեղ է պատրաստուած լինում, սակայն այդ տեղը մի փոքրիկ տղայ բռնած է լինում: Հարսը մի գոյգ փոքրիկ գուլպաներ ¹⁾ նուիրում է այդ տղային, որ վեր կենայ և տեղը իրեն տալ:

Թագաւորի բարեկամ կանայք անմիջապէս շրջապատում են նրան և սկսում են զբաղեցնել նրան, սակայն նա բոլորից էլ հարսնութիւն է անում, ոչ ոքի հետ էլ չի խօսում:

Մի քիչ յետոյ առանց կանչելու բոլոր հարսնեւորները գալիս խմբւում են և նստում ճաշի:

Այս անգամ տան տէրը ամէն կերպ աշխատում է գոհացնել իւր հիւրերին և որքան կարելի է շատ խմացնել, որպէսզի առատածեռն դառնան ու կանչին մեծ նուէր տան: Ծալից յետոյ մականքները, հարս ու աղջկայ հետ, դաւուլ-գուռի առաջնորդութեամբ, գնում են քաւորի տանից խոնչան բերելու: Սա լինում է մի խոնչի մէջ դրած մի աման հալուայ, գաթայ, հաւ, մրդեղէն և 5—15 ր. կանչի դրամ: Այս խոնչան մի հարսի գլխի դրած պարելով գալիս են, հանդիսականների առաջ էլ խոնչան պար է ածել տալիս կանչ-անող մարդուն, որ սովորաբար նախընտրւած է լինում: Կանչը կանչողը վերցնում է խոնչից հալուան ու փողը, մնացածը յանձնում տնեցիներին, ապա բարձր ձայնով կանչում:

«Ա՛յ Թագաւորի մականքի»:

Մականքները ձայն են տալիս.—Ամմէն, ամմէն:

Կանչողը շարունակում է.

«Աստուած Զեզ բարի հրամմէ. շէն կենայ քաւորը, Աստուած իրան ազապներին արժանացնի, յիշացել ա մեր Թագաւորին 15 մանէթ: Տունը շէն, շէն կենայ»:

—Շէն կենա, շէն, ձայն են տալիս բոլորը:

Քաւորին մի բաժակ գինի և մի քիչ հալուայ են տալիս:

¹⁾ Գուլպաները կոչւում են գօտկոում գիւլպա, որովհետեւ նորահարսի գօտիկում են պահուած լինում յատկապէս այդ երեխային տալու համար:

Յետոյ նորահարսի հայրն է նուէր տալիս, և կանչողը նուէրն յիշելիս աւելացնում է. «Յիշացել ա մեր թագաւորին մին աղջիկ, 100—200 ռ. բաժինք, 5—10 ռ. փող՝»

Ապա միառմի յիշելով՝ նուէրներ են հաւաքում բոլոր հարսնեւորներէց, որից գոյանում է 100—300 ռ. և տալիս թագաւորի հօրը:

Այժմ կանչը հետզհետէ վերանում է:

Կանչից յետոյ հեռաւոր բարեկամներն ու ծերունիները ցրւում են, մնում են միայն մօտիկներն ու երիտասարդները, որոնք պարը շարունակելով թագաւորուն էլ մէջ են առնում և 7 պտոյտ (պատ) պարեցնում: Հէնց այս միջոցին թագաւորը իւր քաւորի և փեսեղբօր հետ բարձրանում է կտուրը, քաւորի թուրը դնում են հերթիկի վրայ, թագաւորը չոքում, 3 անգամ ծունր է դնում և համբուրում թուրը, ապա երկու հոգի վերցնում են թուրը և փոքր ինչ բարձրացնում, միասգամայն պահելով հերթիկի վրայ: Յետոյ թագաւորը մի հաւի ոտից բռնած խփում է թրին այնպէս՝ որ գլուխը կտրուի ընկնի հերթիկից ներս՝ պարողների բռնած շրջանի մէջ: Թագաւորին հետևում են քաւորը, փեսաղպէրը, երբեմն և ուրիշներ: Այս գլխատուած հաւերը հաւաքում են, պահում որ յետոյ ազապները քէֆ անեն:

Երբ նորահարսը լրացնում է պարի եօթերորդ պտոյտը, պարը ընդհատուում է, և դաւուլ-զուռնան բարձրանում է կտուրը, ուր թագաւորն է պար բռնում, պարագլուխը մերկ թուրը ձեռին բռնած նայնպէս 7 պտոյտ է առնում և կրկին իջնում տունը:

Այստեղ նորահարսին բերում մէջտեղը կանգնեցնում են, մի կին էլ կանգնում է մօտը՝ մի սկուտեղ ձեռին:

Սկսւում է կաննջ յօգուտ նորահարսի: Նախ թագաւորի մայրը և ապա միւս կանայք են տալիս: Կանչ հաւաքող կինը բարձրաձայն յայտարարում է. «Շէն կենայ, շէն այսինչը, հարսին բաշխեց այսքան մանէթ՝: Վերջը հաշւում են նուիրած փողերը, գումարը յայտարարում և տալիս

հարսի սկեսորը, իբր հարսի առանձին սեպհականութիւն։

Այնուհետեւ շարունակում են պարել, և հետզհետէ ցըրուել։

Խաշի օր.—Երկուշաբթի օրը Թագուորի տունը հրաւիրում են տղամարդիկ, որոնց ճաշին մատուցանում են միայն խաշ, այս պատճառով և՛ այդ օրը կոչւում է խաշի օր։ Ճաշից յետոյ Թագաւորը իւր ազապներով սկսում է զուարճանալ. նա բարձրանում նստում է Թախտի վրայ, ազապները մօտենում են նրան և դանդատում, թէ այսինչ ազապը իւր պարտաւորութիւնները կարգին չկատարեց, այսինչ տեղ քո զօրքիդ ծարաւ թողեց, մի ուրիշն որոշեալ հացը չտուեց և այլն, և այլն։ Թագաւորը քննութիւն է կատարում և մինին մեղադրելով տուգանքի է ենթարկում, հրամայելով, որ նրան սեանից կապեն, կնոջ հետ միասին թողով շերտեն, մի օտը ծալեն և կապեն, և այլն։ Տուգանքը լինում է հաւեր և գինի, որ իսկոյն առնում են և քէֆ անում։

Հետեւեալ երեքշաբթի և չորեքշաբթի օրերը Թագաւորի տունը սաստիկ խառնուած է լինում. իրենց մօտ իջած հիւրերին ճանապարհ են ձգում, գրեթէ ամբողջ գիւղից հաւաքած ամանեղէնը, գդալները և այլն վերադարձնում են. տունը մաքրում, կարգի բերում։ Այս խառնակ օրերում նորահարսը քնում է հարսնջուրը հետ։

Թագը վեր ղնիլ.—Չորեքշաբթի երեկոյեան հրաւիրում են քահանային Թագը վերցնելու։ Քաւորը թուրը և սրա պատեանը խաչաձև բռնում է քահանայի առաջ չոքած հարս ու Թագուորի գլխներին, որոնց առաջ դրուած է լինում մի բաժակ գինի։ Թագուորի կանաչ կարմիրն էլ կապած է լինում։ Քահանան քանդում է նարօտը, վերցընում գինին տալիս Թագուորին, որ կէսը խմէ, յետոյ քանդում է կանանչ կարմիրը, իրեն վերցնում և անպա առնելով բաժակը Թագուորից տալիս հարսին՝ որ ֆնացածը խմէ։

Գիշերը առագաստ են մտնում։ Հնումը սաւանը ցոյց

էին տալիս մօտիկներին, երբեմն էլ կտրից 3 անգամ հրացան էին արձակում, ինչան նորահարսի կուսութեան:

Առաւօտեան հարս ու փեսին մեղրով ձուածեղ և խաւիժ են տալիս: Թագուորն ուտում է և անմիջապէս տանից հեռանում, աշխատելով մարդկանց մէջ չերևալ:

Գլխաւիւր.—Ութ օրից նորահարսի մայրը մի քանի բարեկամուհիներին հետ հարսի հին հանգերձները, գաթայ, հալուայ, սապոն, սանր, լուցկի, ասեղ, թել, գուլպաներ և այլ մի քանի բաներ թռած գալիս է նորահարսի մօտ, և նրա գլուխը լուանում: Խնամոնք հիւրասիրում են սրանց ճաշով, որից յետոյ բոլոր կանանց ներկայութեամբ բաց են անում բաժինքը, որ նորահարսին տղի տուն բերելու օրը, նրանից փոքր ինչ առաջ, բերած են լինում:

Մի ճարտարախօս կին նստելով բաժինքի մօտ, մօտ մի բուրլի նուէր է ստանում հարսի սկեսորջից, և ապա մի-մի վերցնելով ցոյց է տալիս հրաւիրուած կանանց և գովում:

Սովորաբար բաժինքը լինում է հետևեալը.

1 մաֆրաշ.

1 սանդուղ.

1 ձեռք անկողին—մի ներքնակ, մի վերմակ և մի բարձ.

1 հատ կարպետ.

1 հատ փալաս.

1 չարսաւ, որի մէջ կապում են անկողինը ցերեկները.

3—4 ձեռք սպիտակեղէն.

2—3 դէյրայ.

Մի քանի ամանեղէն:

Բաժինքը բանալուց յետոյ նորահարսի սկեսուրը շնորհակալութիւն է յայտնում հարսնամօրը և մի շալընձայում նրան:

Այն ափսէն, որով հալուայ են բերած լինում նորահարսի տնից, այդ միևնոյն օրը յետ չեն տալիս, որպէսզի թագուորը չմեռնի և հարսը յետ չգնայ:

Այնուհետև սկսւում է սովորական կեանքը, միայն մինչև մեծ պատի առաջին օրը չեն թոյլ տալիս նորահար-

սին՝ ջրի գնալու: Այդ առաւօտ միայն, շատ վաղ, նա դընում է ջրի և վերադարձին իւր հետ մի քանի չոփ է բերում: Այս չոփերը կոչւում են դովլաք լոփի, և պահւում են մինչև ամառ, որպէսզի կաթի տակ վառեն, կաթը առատ լինի:

Ծաղկազարդին նորահարսին «հերանց են տանում», ուր ֆնում է մինչև համբարձում: Այս ժամանակ հերանք մի ձեռք շոր են կարում նրա համար: Համբարձման՝ տեղը գալիս է տանելու նորահարսին, և իւր հետ բերում է գաթայ, հալուայ, նորահարսն էլ գնալիս մայրը հետը դընում է գաթայ, հալուայ, սկեսուրի և տեղրերի համար գուլպաներ:

